

**ԵՊՀ ԻՄ ուսանողական գիտական ընկերության
2011-2012 ուստարվա II կիսամյակի գործունեությունը**

2012 թ. փետրվարի 14-ին տեղի ունցան ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերության նախագահի ընտրություններ: ՈՒԳԸ նախագահ ընտրվեց Սլավիկ Ալավերդյանը:

ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի ուսանողական գիտական ընկերությունը 2011-2012 ուստարվա երկրորդ կիսամյակում կազմակերպել է կրթական, գիտական և մշակութային մոտ 20 միջոցառում, որոնց թվում են՝

1. Ինտելեկտուալ խաղ “Facebook” սոցիալական ցանցում (26.01.2012-01.05.2012),
2. Գիտահանրամատչելի զեկուցում էլեկտրոնային հաշվիչ մեքենաների (ԷՀՄ) մասին (24.02.2012),
3. Ինտելեկտուալ խաղի գարնանային փուլ (10.03.12-17.03.12),
4. Գիտահանրամատչելի զեկուցում՝ «10 բնական աղետներ» թեմայով (30.03.2012),
5. Քննարկում՝ “Առողջ ապրելակերպ” թեմայով (11.04.2012),
6. Ֆրանկոֆոնիային նվիրված ցերեկույթ (21.04.2012),
7. «Ուոքի՛, դատարանն է գալիս» պիեսի բեմականացում (23.04.2012),
8. Ցուցահանդես՝ նվիրված Հայոց ցեղասպանության 97-րդ տարելիցին (23.04. 2012-25.04. 2012),
9. Գիտահանրամատչելի զեկուցում՝ «Սոցիալիզմ: Ուտոպիա, թե՞ իրականություն» թեմայով (02.05.2018),
10. Գիտաժողով՝ «Հայ գրատպության 5 դարեր» խորագրով (11.05.2012),
11. «Լավագույն ձեռագիր» խորագրով վայելչագրության մրցույթ (10.05.2012-15.05.2012),
12. Սեմինար՝ «Երաժշտության ազդեցությունը մարդու վրա» թեմայով (18.05.2012) և այլն:

Պատրաստվել են նշանակալի իրադարձություններին (հոբելյաններ, տոներ, տարելիցներ) նվիրված պատի թերթեր:

“Facebook” սոցիալական ցանցում անցկացված ինտելեկտուալ խաղին մասնակցեցին ՀՀ տարբեր բուհերի ուսանողներ և շրջանավարտներ: Հաղթողները պարգևատրվեցին մեդալներով, իսկ առավել ակտիվ մասնակիցները ստացան խրախուսական նվերներ՝ նախորդ ուսումնական կիսամյակում ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ հրատարակած Ինտելեկտուալ խաղի հարցերի «Ի՞նչ, Ինչպե՞ս, Ինչու՞» ժողովածուն:

Ապրիլի 23-ին տեղի ունեցավ մասնաճյուղի պատմության մեջ առաջին բեմականացումը: Մոտ 3 շաբաթ տևած փորձերի շնորհիվ ուսանողները կարողացան լեփ-լեցուն դահլիճին ներկայացնել թուրք ոճրագործների պարագլուխ Թալեաթ փաշային սպանած հայ վրիժառու Սողոմոն Թեհլերյանի դատավարությունը:

Հայոց սեղասպանության 97-րդ տարելիցին նվիրված ցուցահանդեսում ներկայացված էր 20 աշխատանք: Ապրիլի 23-ին դրանք ցուցադրվեցին ԵՊՀ ԻՄ-ում, ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված Իջևանի հուշարձանի հարակից տարածքում, իսկ ապրիլի 25-ին՝ Իջևանի կենտրոնում:

Մայիսի 11-ին տեղի ունեցած գիտաժողովի ժամանակ ուսանողները իրենց զեկուցումներում մանրամասնորեն ներկայացրին հայ գրատպության հիմնումը, տպարանների գործունեությունը և այլն:

ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն շարունակում է համագործակցությունը մայր բուհի ՈՒԳԸ-ի հետ: Մայիսի 18-ին տեղի ունեցած տարելերջյան նիստի ժամանակ ԵՊՀ 6 ֆակուլտետների և Իջևանի մասնաճյուղի ՈՒԳԸ-ները պարգևատրվեցին ակտիվ գործունեության համար: Պատվոգրի արժանացավ մասնաճյուղի ՈՒԳԸ-ի ակտիվ անդամ Միկիչ Փարսադանյանը:

ՈՒԳԸ-ի նախկին նախագահ Նաիրի Սահակյանն արժանացավ պատվոգրի 2009-2012 թթ. ԵՊՀ ԻՄ ՈՒԳԸ-ն ղեկավարելու և կազմակերպչական բեղուն գործունեություն ծավալելու համար:

Ուսանողական գիտական ընկերության կողմից մշակվել են գիտահանրամատչելի զեկուցումների թույլատրման և գնահատման չափորոշիչներ, փոփոխություններ և լրացումներ են կատարվել կանոնադրության մեջ: